Հաստատված է
ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՔՐԵԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ամբիոնի 31.08.2020թ. նիստում (արձ. թիվ 1)
Ամբիոնի պետի ժ/պ _____ Հ.Խաչատրյան
31.08.2020թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ		Կրիմինալոգիա 2
ՖԱԿՈՒԼՏԵՏ		Հեռակա ուսուցում
ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ		Իրավագիտություն
ԱՄԲԻՈՆ		Քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոն E-mail: qreakan@mail.ru
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ		Հ.Խաչատրյան, E-mail: vahagnnano@rambler.ru
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ		3-րդ կուրս, 6-րդ կիսամյակ
ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ		բակալավր

ԿՐԵԴԻՏՆԵՐ		5 (հինգ)
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ		«Կրիմինալոգիա 2» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 110 ժամ, որից 6 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք և 102 ժամ ինքնուրույն աշխատանք: Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ և էսսեներ, պատրաստվում է հաջորդ դասին: Կիսամյակի ընթացքում սովորողները հանձնում են միջանկյալ քննություն, իսկ կիսամյակի ավարտին դասընթացն ավարտվում է քննություն հանձնելով:
ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ		Դասընթացը կառուցվում է «ՀՀ քրեական իրավունք» դասընթացի իմացության վրա:
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ		Դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են ռեցիդիվի, պրոֆեսիոնալ հանցավորության, անդրազգային հանցավորության կրիմինոլոգիական բնութագրերը, դրանց կատարման պատճառներն ու պայմանները, ինչպես նաև կանխարգելման ընդհանուր-սոցիալական և հատուկ-կրիմինալոգիական միջոցները:

ՆՊԱՏԱԿ ԽՆԴԻՐ/ՆԵՐ		Դասընթացի նպատակն է սովորողներին հաղորդել գիտելիքներ և ձևավորել կարողություններ հանցավորության և հանցագործությունների առանձին տեսակների կրիմինալոգիական առանձնահատկությունների, պատճառների ու պայմանների, հանցավորության առանձին տեսակների կանխարգելմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ: Դասընթացի խնդիրներն են՝ • ուսումնասիրել և վերլուծել հանցավորության կառուցվածքը կազմող առանձին հանցատեսակների կրիմինալոգիական բնութագրերը • հանցանք կատարած անձանց կրիմինալոգիական բնութագրերը, • ուսումնասիրել և վերլուծել հանցավորության առանձին տեսակների աճին և ծավալմանը նպաստող պատճառներն ու պայմանները • հանցավորության առանձին տեսակների վերացմանն ուղղված կանխարգելման հնարավորությունները:
ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ *Կարողանա՝*		1. սահմանել հանցավորության առանձին տեսակների հասկացությունները, 2.վիճակագրական տվյալների հիման վրա ինքնուրույն վերլուծել հանցավորության առանձին տեսակների վիճակը, մակարդակը, շարժը, կառուցվածքը, 3. առաջ քաշել հանցավորության առանձին տեսակների զարգացման միտումները, ինքնուրույն վերլուծել դրանց նպաստող գործոնները, 4. կազմել կոնկրետ հանցանք կատարած անձի կրիմինալոգիական պատկերը, 5. վերլուծել հանցավորության առանձին տեսակների ծնող պատճառներն ու պայմանները, կոնկրետ հանցավոր վարքագծին նպաստող այլ գործոնները, 6. մատնանշել հանցավորության առանձին տեսակների կանխարգելման տեսակները, միջոցները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ		
Հիմնական		1. Ամբիոնի կողմից մշակված դասախոսություններ 2. Кудрявцев В.Н., Эминов В.Е. Криминология.- Москва,Юристь, 2007. 3. Малков В.Д. Криминология.- Москва,Юстицинформ, 2008 4. Долгова А.И. Криминология, 3-е издание- Москва,Норма, 2008 5. Антонян Ю.М. Криминология, избранные лекции, Москва, Логос 2004 6. Жмуров Д.В. Криминология в схемах и таблицах (общая часть), Иркутск, 2012 7. Карпец И. И. Преступность: иллюзии и реальность. — М.: Российское право, 1992
Լրացուցիչ		1. Кузнецов Н.Ф.,Лунеев В.В. Криминология,учебник , 2-е издание, Москва 2005 2. Давыдов Я.В. Криминология: Конспект лекций. — М.: Приор-издат, 2006 3. Актуальные проблемы теории и практики борьбы с организованной

преступностью в РФ. Мат. науч.практ. конф. М., 1994.
4. Гуров А.Л. Профессиональная преступность: прошлое и современность. М., 1990.
5. Шнайдер Г.И. Криминология/Пер. с нем. М., 1994.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ

Բաղադրիչ 1- 20% (Միջանկյալ 1)
Բաղադրիչ 2- 20% (Միջանկյալ 2)
Բաղադրիչ 3- 60% (ամփոփիչ քննություն)

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ

Գնահատման արդյունարար միավոր	Գնահատականը տառանշումով		
18-20	Գերազանց	Միջան□□ալ գնահաման միավոր	
13-17	Լավ	Հարց 1	Հարց 2
□-12	Բավարար	2 միավոր	2 միավոր
0-7	Անբավարար		
0	Չներկայացած		

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Սովորողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% (20 միավոր) առաջադիմություն: Առաջադիմության վերջնական գնահատականը ձևավորվում է սովորողի միջանկյալ և ամփոփիչ քննությունների գնահատականների հանրագումարի արդյունքում: Գնահատումը կատարվում է վերոնշյալ բաղադրիչների հիման վրա:
Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար» կամ «Ստուգված» կամ «Չստուգված»:
Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝
ա) «Գերազանց», եթե սովորողը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, նյութը սերտորեն կապում է ոստիկանության ծառայության խնդիրների հետ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևափոխվում է առաջադրանքը, ազատորեն լուծում է խնդիրներն ու կատարում գործնական առաջադրանքները, ճիշտ է հիմնավորում ընդունած որոշումները, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով.
բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների.

		գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները. դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները:
ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Ներկայություն		Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի սովորողին:
		Սովորողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկընդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն աշխատանքների հանձնում: Սովորողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:
Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ		Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:
Ինքնուրույն և գործնական աշխատանքներ		Ինքնուրույն աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում սովորողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:

ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՄԱՆ ՔԱՐՏԵԶ

Թեմա 1 Ռեցիդիվ,պրոֆեսիոնալ հանցավորությունը և դրա կանխարգելումը **(2 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1.Ռեցիդիվ, պրոֆեսիոնալ հանցավորության կրիմինալոգիական բնութագիրը **2.** Հանցագործությունների ռեցիդիվ թույլ տված անձանց և պրոֆեսիոնալ հանցագործների անձի կրիմինալոգիական բնութագիրը 3. Ռեցիդիվ, պրոֆեսիոնալ հանցավորության պատճառներն ու պայմանները 4.Ռեցիդիվ, պրոֆեսիոնալ հանցավորության կանխարգելումը	Հարցեր 1-4 – ներկայացվում է դասախոսություն: Հարցեր 1-3 – ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը, քրեական վիճակագրությանը, տվյալ հարցերի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ և պատկերացում ձեռք բերելու համար:

Թեմա 2 Անդրազգային հանցավորությունը և դրա կանխարգելումը **(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Անդրազգային հանցավորության կրիմինալոգիական բնութագիրը 2. Անդրազգային հանցավորության տեսակները **3.**Անդրազգային հանցավորության պատճառներն ու պայմանները 4. Անդրազգային հանցավորության կանխարգելումը	Հարցեր 1-4 – ներկայացվում է դասախոսություն: Հարցեր 1-4 – սեմինար պարապմունք՝ սովորողների անհատական հարցումների ձևով, Սովորողներին բաժանելով 4 խմբի՝ ներկայացված վիճակագրական տվյալների հիման վրա իրականացնում են վերլուծություն՝ համապատասխանաբար կազմակերպված հանցավորության վիճակի, շարժի, մակարդակի, կառուցվածքի, զարգացման միտումների,կազմակերպված հանցավորության պատճառների և պայմանների վերաբերյալ: Հարցեր 1-4 – ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը, քրեական վիճակագրությանը, տվյալ հարցերի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ և պատկերացում ձեռք բերելու համար:

Հարցաշար

«Կրիմինալոգիա 2» առարկայի առաջին միջանկյալ քննության

1. Բռնի հանցագործությունների կրիմինալոգիական բնութագիրը
2. Բռնի հանցագործների անձի բնութագիրը
3. Բռնի հանցագործությունների պատճառներն ու պայմանները
4. Բռնի հանցագործությունների կանխարգելումը
5. Ընտանեկան բռնությունների կրիմինոլոգիական բնութագիրը
6. Ընտանեկան բռնությունների պատճառներն ու պայմանները
7. Ընտանեկան բռնությունների կանխարգելումը
8. Շահադիտական հանցավորության կրիմինալոգիական բնութագիրը
9. Շահադիտական հանցագործների անձի բնութագիրը
10. Շահադիտական հանցավորության պատճառներն ու պայմանները
11. Շահադիտական հանցավորության կանխարգելումը
12. Ռեցիդիվի հասկացությունը և տեսակները
13. Ռեցիդիվային, պրոֆեսիոնալ հանցավորության բացասական միտումները
14. Ռեցիդիվի պատճառներն ու պայմանները
15. Պրեֆեսիոնալ հանցավորությունը,հասկացությունը և էությունը
16. Ռեցիդիվ թույլ տված անձանց, պրոֆեսիոնալ հանցագործների բնութագիրը
17. Ռեցիդիվի և պրոֆեսիոնալ հանցավորության կանխարգելումը

Հարցաշար
«Կրիմինալոգիա 2» առարկայի կիսամյակային քննության

1. Կրիմինալոգիայի հասկացությունը և առարկան
2. Կրիմինալոգիայի ընդհանուր մեթոդները
3. Կրիմինալոգիայի հատուկ մեթոդները
4. Կրիմինալոգիայի տեղը մյուս գիտությունների համակարգում
5. Կրիմինալոգիայի որպես գիտության ծագումը և զարգացման նախնական փուլը
6. Կրիմինալոգիայի զարգացման դասական ուղղությունը
7. Կրիմինալոգիայի զարգացման մարդաբանական (կենսաբանական) ուղղությունը
8. Կրիմինալոգիայի զարգացման սոցիոլոգիական ուղղությունը
9. Սոցիալական կազմալուծման տեսության
10. Անոմիայի տեսությունը
11. Մշակույթների հակադրության տեսություն
12. Ստիգմայի տեսություն
13. Հանցավորության հասկացությունը,սոցիալական էությունը
14. Հանցավորության քանակական բնութագիրը
15. Հանցավորության որակական բնութագիրը
16. Հանցավորության լատենտայնություն
17. Հանցագործի անձի հասկացությունը
18. Հանցագործի անձի կառուցվածքը
19. Հանցագործի անձի տիպաբանությունը
20. Հանցավորության պատճառների հասկացությունը / դետերմինացիա/
21. Հանցավորությանը նպաստող պայմանները
22. Հանցավոր վարքագծի մեխանիզմ
23. Կոնկրետ իրավիճակի դերը
24. Հանցավորության կանխարգելման հասկացությունը
25. Հանցավորության կանխարգելման տեսակները
26. Հանցավորության կանխարգելման օբյեկտները

27. Հանցավորության կանխարգելման սուբյեկտները
28. Ոստիկանությունը, որպես հանցավորության կանխարգելման հատուկ սուբյեկտ
29. Վիկտիմոլոգիա
30. Հանցագործությունների վիկտիմոլոգիական կանխարգելում
31. Բռնի հանցագործությունների կրիմինալոգիական բնութագիրը
32. Բռնի հանցագործների անձի բնութագիրը
33. Բռնի հանցագործությունների պատճառներն ու պայմանները
34. Բռնի հանցագործությունների կանխարգելումը
35. Ընտանեկան բռնությունների կրիմինոլոգիական բնութագիրը
36. Ընտանեկան բռնությունների պատճառներն ու պայմանները
37. Ընտանեկան բռնությունների կանխարգելումը
38. Շահադիտական հանցավորության կրիմինալոգիական բնութագիրը
39. Շահադիտական հանցագործների անձի բնութագիրը
40. Շահադիտական հանցավորության պատճառներն ու պայմանները
41. . Շահադիտական հանցավորության կանխարգելումը
42. Ռեցիդիվի հասկացությունը և տեսակները
43. Ռեցիդիվային հանցավորության բացասական միտումները
44. Ռեցիդիվի պատճառներն ու պայմանները
45. Պրեֆեսիոնալ հանցավորությունը,հասկացությունը և էությունը
46. Պրեֆեսիոնալ հանցավորության բացասական միտումները
47. Ռեցիդիվի և պրոֆեսիոնալ հանցավորության կանխարգելումը
48. Անդրազգային հանցավորության հասկացությունը
49. Կազմակերպված հանցավորության բնութագիրը
50. Թմրամիջոցների ապօրինի շրջանառության հասարակական վտանգավորությունը և նրա հիմնական հասկացությունները
51. Թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների կրիմինալոգիական բնութագիրը
52. Թմրամիջոցների ապօրինի շրջանառություն իրականացնող անձանց կրիմինալոգիական բնութագիրը
53. Կոռուպցիոն հանցավորության հասկացությունը
54. Կոռուպցիայի կրիմինալոգիական բնութագիրը
55. Հակակոռուպցիոն ռազմավարության ուղղությունները
56. Թրաֆիքինգի կրիմինալոգիական բնութագիրը
57. Անդրազգային հանցավորության պատճառներն ու պայմանները
58. Անդրազգային հանցավորության կանխարգելումը